

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ «ՏՀՏ-ի կիրառումը որպես բարձր ներգրավվածությունը ապահովելու
միջոց»**

ԱՌԱՐԿԱ՝ Ինֆորմատիկա

ՀԵՂԻՆԱԿ՝ Դովլաթյան Լուսիկ Սմբատի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ.1 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Սահակյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ 1. ՏՀՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԵՐԻՆ	6
ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ	7
ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	11
ԳԼՈՒԽ 4 Արդյունաձևտ ուսուցման յոթ մոտեցումներ	16
Դասի պլան	16
Ամփոփում.....	20
Օգտագործված գրականություն	21

ՆԱԽԱԲԱՆ

«Առանց նորին ձգտելու, չկա կյանք, չկա զարգացում, չկա առաջընթաց»

Վ.Գ. Բելինսկի

Ժամանակը և տեղեկատվական տեխնոլոգիաները հոյակապ ուսուցիչներ են, սակայն, ցավոք, վերջիններս իրենց աշակերտներին սպառնում են ծերությամբ: Ժամանակը երբեք կանգ չի առնում, կյանքը մշտապես զարգանում է, մարդկային փոխհարաբերությունները, աշխարհընկալումն ու աշխարհաճանաչումն օր-օրի փոխվում են: Մարդը, տանը նստած, կարող է իմանալ ամեն ինչ՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների: Օրեցօր ինտերնետից օգտվողների քանակը աճում է և աճում է ոչ թե մեկ անձով, այլ հարյուրավոր օգտատերեր են միանում համաշխարհային սարդոստայինին: Սարդոստայն ասվածը շատ դիպուկ է, քանզի մուտք գործողը չի կարողանում այդ տեղից ելքը գտնել: Մեր երկրում ամեն օր ավելանում են համակարգչից ու տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվողների քանակը, որը ունի իր դրական և բացասական կողմերը:

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ աշխարհի համար ստեղծել են նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում մարդը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը:

Ժամանակակից կրթական պահանջները թելադրում են վերանայել կրթության սովորական ձևերն ու բովանդակությունը: Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունից, ուսուցչից պահանջվում է կատարել հատուկ գործողություններ, որոնք կձևավորեն կարողունակություններ և գիտելիքներ՝ ապագայում գործնական խնդիրների լուծման համար:

Դասերի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մեծամասնության մոտ կախված է նրանից, թե ինչ արդյունավետ մեթոդներով է ընթանում ուսուցման գործընթացը: Անհրաժեշտ է մտածել բոլոր աշակերտների ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել ճանաչողական հետաքրքրությունը:

Որպեսզի աշակերտները լավ տիրապետեն ցանկացած առարկան, անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, աշակերտների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և գնահատմանը

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսը տեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին ժամանակը, որը շատերիս մոտ պակասում է, ուսուցչի աշխատանքում նույնպես: Ուսուցման պրոցեսը, ինչպես գիտենք պետք է կատարվի սահմանափակ ժամանակում, սակայն պահանջում է գիտելիքների յուրացման հնարավորինս բարձր մակարդակ, կարողությունների և հմտությունների ճշգրիտ ձևավորում: Տեղեկատվական Տեխնոլոգիաները մեր կյանքում ամենուր են՝ սկսած մեր առօրյայից, վերջացրած տարբեր գիտություններով ու բնագավառներով: Տեղեկատվական Տեխնոլոգիաների կարևորությունը գիտակցելով յուրաքանչյուր ուսուցիչ փորձում է դասապրոցեսի համար հատկացված 45 րոպեն օգտագործել հնարավորիս արդյունավետ: Արդյունավետությունը բարձրացնելու համար նախապես պլանավորում ենք դասը, շատ դեպքերում օգտագործում ենք դասամիջոցը՝ գրատախտակին պատրաստի նյութեր, պաստառներ ցուցադրելով: Դասերի ընթացքում մտքի ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել թե ինչ անել, որպեսզի սովորողների հետաքրքրությունը չկորչի, և պահպանվի ակտիվությունը ամբողջ դասի ընթացքում: Այդ կապակցությամբ պետք է ներդնել նոր արդյունավետ ուսումնական մեթոդներ և այնպիսի մեթոդական հնարքներ, որոնք կակտիվացնեն դպրոցականների ուղեղի աշխատանքը, կխթանեն աշակերտներին, որպեսզի նրանք ինքնուրույն փորձեն ձեռք բերել նոր գիտելիքներ: Սակայն երբ դասարանը բազմամարդ է, որն արդիական ինդիեր է այսօրվա մեր շատ դպրոցներում, դասն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու համար մեզ օգնության են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք մեծ դեր կարող են կատարել դասապրոցեսում: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում կրկնակի, եռակի աշխատանք է ուսուցչի համար:

Նպատակը

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումն իր տեղն է գտնում առաջին հերթին լավ կազմակերպված դասի ժամանակ: Տարրական դպրոցի տեղեկացվածությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- բարելավել դասի անցկացման մեթոդները
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- արագ և որակյալ պատրաստվել դասին

Խնդիրները

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, հիմնականում դպրոցներն ունեն համակարգչային սենյակ, համացանց, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում:

Այնուամենայնիվ, ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ-ի կիրառումը համարում է հավելյալ աշխատանք, ծանրաբեռնվածություն, որի համար նրանք նաև չեն վճարվում: Ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում ուսուցիչներին նորարարությունից: Բայց առաջին հերթին ուսուցիչը պետք է հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե՛ իր աշխատանքը, թե՛ աշակերտների՝ դարձնելով դասն առավել մատչելի, հետաքրքիր, կիրառական և աշակերտակենտրոն:

ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում. դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից:

Արդիականությունը

- Նա ինչպե՞ս է իր անձնական ժամանակը, որը կարող է, բայց չէր հասցնում անցկացնել ընտանիքի հետ, ծախսել իր անձնական կարիքների բավարարման և ի վերջո առանց տետր ու կարմիր գրչի բազմոցին հանգիստ նստելու համար:
- Տեսնում է իր աշխատանքի արդյունքը: Ստանում է այն զգացողությունը, որ իր ժամանակը ծախսվել է արդյունավետ և նպատակային:
- Ստանում է բավարարվածության զգացում իր աշխատանքից՝ տեսնելով աշակերտների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:
- Անընդհատ զարգանում ու կատարելագործվում է որպես մասնագետ, կիրառում է ժամանակակից մեթոդներ իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, նոր հմտություններ ձեռք բերելու և միշտ ձեռքը ժամանակի զարկերակին պահելու համար:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցումը դարձնել բացատրական, պատկերազարդ, այստեղ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ առարկա: Սա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների գիտակցական յուրացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ տալիս ակտիվացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, դասերն անցկացնել բարձր գեղագիտական մակարդակով (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի՝ կիրառելով տարբեր բարդությունների առաջադրանքներ: Այսպիսով՝ կրթական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ժամանակակից ուսումնական գործընթացի հրատապ խնդիր է:

ԳԼՈՒԽ 1. ՏՀՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՍԵՐԻՆ

ՏՀՏ-ները հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել

ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

Ուսուցչի աշխատանքը անմիջական կապված է համակարգչի հետ: Համացանցում շատ նյութեր կան ուսումնական նյութերի վերաբերյալ, որոնց օգնությամբ դասը կարելի է ներկայացնել ավելի հետաքրքիր ու հաճելի աշակերտների համար: Տեքստային խմբագիրների օգնությամբ կազմվում են ստուգողական և ինքնուրույն աշխատանքներ, աշխատանքային պլաններ և պարապմունքի մշակումներ: Նոր նյութի բացատրության ժամանակ հնարավոր է այն ներկայացնել PowerPoint ծրագրի միջավայրում ստեղծված միջոցներով, վերջինս հնարավորություն է տալիս սովորողներին դիտարկելի ձևով ներկայացնել նյութը: Նյութի դիտարկելի ներկայացումը բարձրացնում է դրա յուրացումը: Դա հնարավորություն է ընձեռում դյուրինացնել մտապահումը, ակտիվացնում է սովորողների ընկալումը, նպաստում ուշադրության բարձրացմանը, նվազեցնում հոգնածությունը: Դիդակտիկ ճիշտ մոտեցման դեպքում համակարգիչը ակտիվացնում է սովորողների ուշադրությունը, զարգացնում իմացական գործընթացները, մտածողությունը:

Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Նորարական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ աշակերտներն առանց հասկանալու մտնում են դասի մեջ, սովորում են խաղալով, ոգևորված՝ հասկանալով ինչպես ներգրավվեցին դասին:

ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴԱՍԱԳՐՈՑԵՍՈՒՄ

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ունեն իրենց կարևոր նշանակությունը, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը: Ուսուցման մեթոդների ընտրությունը փոխվում է ժամանակին համընթաց, և ՏՀՏ-ների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ուսուցման բոլոր բաղադրիչները: Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի ներդրումը հանգեցնում է Էական փոփոխության՝ ավանդական մեթոդները փոխարինելով ժամանակակից մեթոդների, հնարների, համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները և այլն: Անդրադառնալով

աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության դյուրին յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակներն ու յուրահատկությունները՝ նաև մեր դիտարկումների հիման վրա առանձնացրել ենք համակարգչային ծրագրերի հետևյալ տեսակները՝ վարժանքային, ցուցադրական, ուսուցողական, տեղեկատվական, մոդելավորման և մուլտիմեդիա ծրագրեր:

ՏՀՏ բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, առանձնացրել ենք հետևյալ խմբերում՝ 1. նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ), 2. էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը, 3. վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային լսարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները, այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է, 4. մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգեր և կիրառական այն ծրագրերը, որոնք ուսանողների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, այն իրականացվում է որպես ազատ հետազոտություն: ՏՀՏ բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառույթային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն: Էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնախնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը: Դասավանդողի անձնային որակները բացառիկ նշանակություն ունեն ուսումնադաստիարակչական գործընթացում: Էլեկտրոնային ուսուցմամբ գործնականում իրականանում է անհատական մոտեցում, որն առավելություն է դիտվում ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա

յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ավելի հեշտ են տրվում, երբ այն ուսումնասիրողը ունի բավարար գիտելիքներ: Որպեսզի աշակերտները լավ տիրապետեն առարկան, անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, աշակերտների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և գնահատմանը: ՏՅՏ բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, առանձնացրել ենք հետևյալ խմբերում՝ 1. նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ), 2. էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը, 3. վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային լսարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները, այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է, 4. մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգեր և կիրառական այն ծրագրերը, որոնք ուսանողների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, այն իրականացվում է որպես ազատ հետազոտություն: ՏՅՏ բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառույթային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն: Էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնահիմնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը: Դասավանդողի անձնային որակները բացառիկ նշանակություն ունեն ուսումնադաստիարակչական գործընթացում: Էլեկտրոնային ուսուցմամբ գործնականում իրականանում է անհատական մոտեցում, որն առավելություն է դիտվում ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության

կարգավորումը՝ ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Իսկ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ավելի հեշտ են տրվում, երբ այն ուսումնասիրողը ունի բավարար գիտելիքներ: Որպեսզի աշակերտները լավ տիրապետեն առարկան, անհրաժեշտ է շատ լրջորեն վերաբերել յուրաքանչյուր թեմայի ուսուցմանը, աշակերտների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և գնահատմանը:

Ուսուցչից մեծ ջանք է պահանջվում դասապրոցեսի մեջ ներգրավել ամբողջ դասարանը, զարգացնել առարկայի նկատմամբ ակտիվությունն ու հետաքրքրությունը, դասը դարձնել ավելի արդյունավետ: Ներգրավվածության և առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացման գործում դասավանդման ժամանակ ՏՀՏ-ի կիրառումը: Քանի որ համակարգչային տեխնիկայի միջոցով պատրաստված դասերը սովորական դասերից ավելի տպավորիչ են, ուստի սովորողներն ավելի մեծ հետաքրքրությամբ են յուրացնում ուսումնական նյութը:

Եթե տաս կամ տասնհինգ տարի առաջ մեծ ձեռքբերում էր համարվում այն, որ աշակերտը կարողանում է օգտվել համակարգչից և համացանցում որոնել անհրաժեշտ ինֆորմացիան, այսօր զարմացնում են այն աշակերտները, ովքեր չեն տիրապետում համակարգչային տարրական գրագիտության: Այդ դեպքում, իհարկե, մեծ անելիք ունի յուրաքանչյուր ուսուցիչ: Նախ ուսուցիչն ինքը պետք է տիրապետի համակարգչային ծրագրերին, ինչպես նաև իմանա վեբ-կայքերից օգտվելու պարզագույն կանոնները: Նրա խնդիրն է կարողանալ աշակերտներին ներգրավել տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, վերլուծելու, համակարգելու, որը կօգնի աշակերտի մոտ զարգացնել ինքնուրույն, ստեղծագործական, վերլուծական մտածողությունը:

ՏՀՏ գործիքներով ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- ✓ դասավանդողի և սովորողի համար՝ համակարգիչների և ցանցի առկայություն,
- ✓ դասավանդողի համար՝ դասընթաց մշակելու կարողություն, վարելու հմտություն,
- ✓ սովորողի համար՝ համակարգչից օգտվելու կարողություն:

Այսօր համակարգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, ձայնագրելու, մեքենա վարելու կամ հեռախոսից օգտվելու

ունակությունը: ՏՀՏ-ները ուսուցչի համար անփոխարինելի են որպես գիտելիքների աղբյուր և գործիք, որոնցով կարելի է կառուցել դասը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման շրջանակները լայն

են: Դրանք կիրառվում են համադպրոցական, ինքնուրույն աշխատանքներ, թիմային աշխատանքներ, մրցույթներ կազմակերպելու համար, ստեղծագործական նախագծերի մշակման և ներկայացման, ցուցադրումների համար: ՏՀՏ-ները կիրառվում են նաև գնահատման թեստային աշխատանքների կատարման նպատակով: ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում՝

- Ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան
- Հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա
- Իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ
- Խնայել ժամանակը
- Հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր
- Ուսուցչին տալիս է մեծ պաշարների շտեմարան:

Դասապրոցեսում ՏՀՏ-ներն ակտիվորեն օգտագործելու համար ուսուցիչը պետք է հմտորեն տիրապետի դրանց:

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՏՀՏ-ների կիրառումը դասապրոցեսում ամենևին էլ չի նշանակում ուսուցչի ժամանակի տնտեսում, աշխատանքի հեշտացում: Բայց ճիշտ օգտագործելու դեպքում ենթադրում է ժամանակի խնայողաբար օգտագործում դասապրոցեսի ընթացքում: Երբ փորձում ես դասը պլանավորելիս ինչ որ բան ստեղծել համակարգչի օգնությամբ ինքնուրույն, հասկանում ես, որ ժամանակն անցավ աննկատ, ստեղծածդ նյութն էլ ընդամենը 45 րոպեի համար է: Յուրաքանչյուր ուսուցիչ, ով փորձում է ժամանակ առ ժամանակ կիրառել ՏՀՏ –ներ դասապրոցեսում, շատ լավ է գիտակցում խոսքերիս իմաստը: Գիտակցում է թե առավելությունները, թե թերությունները: Որպես թերություն կարելի է նշել նաև այն, որ երբեմն դասը կարող է արդյունավետ չլինել, դասի ընթացքում հնարավոր է ուսուցիչը չհասնի իր նպատակին ինչ-ինչ պատճառներով: Դրա համար շատ կարևոր է հենց թեմայի, դասի ընտրությունը:

ՏՀՏ-գործիքներից լայնորեն կիրառվող տարբերակներից՝ տեղեկատվություն ներկայացնելու ամենահարմար և արդյունավետ եղանակներից մեկը, որը համատեղում է դինամիկան, ձայն

ու պատկերը, այսինքն՝ երեխայի ուշադրությունը ամենաերկար պահող գործոնը, մուլտիմեդիա շնորհանդեսն է: Բացի դրանից շնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին ինքնուրույն կազմել ուսումնական նյութ՝ հիմնված որոշակի դասի, թեմայի, առարկայի բնութագրերի վրա, ինչը թույլ է տալիս դասը կազմակերպել այնպես, որ հասնի առավելագույն կրթական արդյունքի: Առանց տեղեկատվական տեխնոլոգիաների չենք կարող մեզ պատկերացնել ժամանակակից դպրոցում: Ի հայտ են գալիս ոչ սահմանափակ հնարավորություններ ուսումնական գործունեության համար զարգացնելով միտքը: Այսօր գոյություն ունի բազմաթիվ կրթական կայքեր, ֆորումներ, հավելվածներ և ծրագրեր, որոնք հենց այդ նպատակին են ծառայում: Տարեցտարի ավելանում են դիդակտիկ նյութերը, որոնք ստեղծվել են ՏՀՏ-ների օգնությամբ: Սակայն էլեկտրոնային գրադարանների, ինտերնետ կապի և այլ տեխնիկական սարքերի բացակայությունը դպրոցներում դեռևս մտահոգիչ խնդիր է:

Հիմա բերեմ իմ անձնական օրինակներից:

Միավորային գնահատում իրականացնելիս ինձ շատ է օգնում **Quizizz** առցանց գործիքը: Quizizz առցանց գործիքի օգնությամբ հնարավոր է



իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևելու են և պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը և՛ ճշտությունը: Վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով: Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնել հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ •

պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց

- հետևել սովորողների առաջադիմությանն առցանց
- տարածել պատրաստի վարժությունները հղմամբ
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

Quizizz առցանց տիրույթ մուտք գործելու, գրանցվելու և աշխատելու համար անհրաժեշտ է ցանկացած զննարկիչում գրել quizizz.com հասցեն և մուտք գործել: Quizizz առցանց գործիքի կիրառման արդյունքում կունենաք

- առցանց թեմատիկ վարժություններ միավորային գնահատում իրականացնելու համար
- պատրաստի վարժությունները հղմամբ առցանց տարածելու հնարավորություն
- սովորողների առաջադիմության միավորային արդյունքների ներբեռնում և վերլուծություն:

Kahoot -ի միջոցով հնարավոր է.

- ❖ հարցերի մեջ տեղադրել նկարներ, բանաձևեր, գծագրեր, աղյուսակներ,
- ❖ հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի,
- ❖ հարցերին ավելացնել նկարագրություններ, տեսահոլովակ,
- ❖ օգտագործել հավելվածը նաև Skype-ի և Google Hangouts-ի միջոցով:

Socrative -ի միջոցով հնարավոր է.



- ❖ առաջադրանքները ստեղծելիս կազմել հարցադրումների բազմակի ընտրանք, ստեղծել հարցեր՝ ճիշտ-սխալ ձևաչափով և «լրացնել բացթողնվածը» ձևաչափերով,

❖ հարցերի հաջորդականությունը դասավանդողի ընտրությամբ խառնվում է համակարգի միջոցով:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Ուստի ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանվող դասերի շրջանակը: Իհարկե, համակարգչի օգտագործումը ոչ բոլոր նյութերի բացատրության և քննարկման ժամանակ է նպատակահարմար. այս դեպքում այն կարող է ստեղծել ավելորդ ծանրաբեռնվածություն: Ուստի նյութի ընտրությունը պետք է կատարել նրա՝ համակարգչային ներկայացման արդյունավետությունից ելնելով:

Ներկայացնում եմ Quizizz առցանց գործիքի օգնությամբ անցկացված դասի արդյունքները դիագրամի միջոցով:

Երրորդ փորձարարական դասից հետո ստիպվեց այ ստիպի արդյ ու.ն



	I դաս	II դաս	III դաս
■	8	10	12
■	12	15	15
■	13	8	6

ԳԼՈՒԽ 4 Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ

1. Մտաբերում

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը:

2. Նյութի սփռում ժամանակի մեջ

Կարճ ժամանակում սովորածը շատ ավելի արագ է մոռացվում, քան երկար ժամանակում սովորածը:

Շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ-երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

3. Խառը ուսուցում:

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Սա հատկապես տեսանելի է մաթեմատիկայի դեպքում

4. Մանրամասնում

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»: Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է

դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Չետևաբար՝ շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը:

5. Օրինակներով ուսուցում

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան:

Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով

Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

6. Պատկերի և տեքստի համադրում

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

7. Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Դասի պլան

<p>Ինֆորմատիկա</p>	<p><i>Ինֆորմատիկա</i> 04.10.2023 թ.</p>
<p>Դասարան և կիսամյակ</p>	<p><i>6-րդ , 1-ին կիսամյակ</i></p>
<p>Թեմայի գլուխ և թեմա</p>	<p><i>Գլուխ 2 , §2.2</i></p>
<p>Օգտագործվող նյութեր`</p>	<p><i>դասագիրք, քարտային առաջադրանքներ</i></p>
<p>Ամբողջական պատկեր և դասի նպատակ</p>	<p><i>Սովորողները արդեն գիտեն...</i></p> <p>ա/ Գիտենա Անհատական համակարգիչ, համակարգչում մշակվող ցանկացած ինֆորմացիա ներկայացվում է թվային տեսքով:</p> <p><i>Այս դասի նպատակն է`</i></p> <p>ա/Ճանաչել համակարգչի հիմնական բաղադրիչ մասերը,</p> <p>հասկանալ դրանց նշանակությունը:</p> <p><i>Այսօրվա դասի գիտելիքները սովորողները կօգտագործեն հաջորդ դասերին` ճիշտ օգտվել համակարգչից:</i></p> <hr/>

<p>Վերջնարդյունքները</p>	<p>Սովորողը կկարողանա</p> <p>ա/ կիրառել համակարգչից օգտվելու հիգիենիկ նորմերը:</p> <p>բ/ տարբերել համակարգչի հիմնական մասերը, իմանա դրանց նշանակությունը:</p> <p>Կիրառելի են 8 առանցքային կարողունակություններից՝ լեզվական կարողունակություն և գրագիտություն, սովորել սովորելու կարողունակությունը, թվային և մեդիա կարողունակությունը:</p>		
<p>Դասի ընթացք/ ընտրված մեթոդներ</p>	<p>Խթանման փուլ՝ Կատարել ֆրոնտալ հարցում, անհասկանալի հարցերի քննարկում: Զույգերով աշխատանք:</p> <p>Իմաստի ընկալման փուլ՝ նոր նյութի հաղորդում՝ խմբային աշխատանք</p> <p>Կշռադատման փուլ՝ ամփոփում և ամրապնդում, կատարել գործնական աշխատանք:</p>		
<p>Տնային աշխատանք</p>	<p>Սովորել Անհատական համակարգչի ընդհանուր կառուցվածքը, §2.2, էջ 14</p>		
<p><i>Գործողություն սովորողների համար</i></p>	<p><i>Հստակեցնող ուղղորդող կետեր, հստակ</i></p>	<p><i>տևող.</i></p>	

<p><i>Հարց 1. Ինչո՞ւ է պարտադիր պահպանել անվտանգության կանոնները համակարգչային դասասենյակում:</i></p> <p><i>2. Ինչպիսի՞ն պետք է լինի կեցվածքը համակարգչով աշխատելիս:</i></p> <p><i>3. Ի՞նչ գույն ունեցող առարկայի է խորհուրդ տրվում նայել ժամանակ առ ժամանակ, համակարգչով երկար աշխատելիս աչքերը հանգստացնելու նպատակով.</i></p> <p style="padding-left: 40px;"><i>ա) կապույտ կամ կանաչ</i></p> <p style="padding-left: 40px;"><i>բ) կարմիր կամ վառ դեղին</i></p> <p style="padding-left: 40px;"><i>գ) վարդագույն կամ նարնջագույն</i></p>	<p>Անվտանգության կանոններ, կանոնների պահման կարևորությունը :</p> <p>Համակարգչի առաջ նստելու ճիշտ կեցվածք...</p>	<p>15ր</p>
<p><i>Դասարանը բաժանել խմբերի և հանձնարարել նոր նյութը՝ բաժանելով խմբերի մեջ:</i></p>	<p>Յուրաքանչյուր խմբին տալ քարտեր, որոնց վրա կլինեն հարցեր:</p> <p>https://www.youtube.com/watch?v=m8MCS4I660Y</p>	<p>10ր</p>
<p><i>Լսել խմբերի պատասխանները, քննարկել անհասկանալի հարցերը:</i></p>	<p>Կատարել վերլուծություններ և լրացումներ:</p>	<p>10 րոպե</p>

<p>Անդրադարձ</p>	<p>Հարցերով ամփոփել նոր նյութը Ընդհանուր կատարել https://quizizz.com/admin/quiz/5da87458411aa5001e20dee3/</p>	<p>8 թույլ</p>
<p>Գնահատել սովորողներին:</p>	<p>Գնահատման սանդղակ`</p> <p>4-տիրապետում է նյութի չափորոշային նվազագույն պահանջներին</p> <p>5- տիրապետում է նյութի չափորոշային նվազագույն պահանջներին , ծանոթ իրադրություններում կարողանում է կիրառել</p> <p>6- քայլեր է կատարում հանձնարարված առաջադրանքից</p> <p>7- Կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, առաջադրանքի հիմնավորում</p> <p>8- Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, բերել բերել օրնակներ:</p> <p>9- Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, հիմնավորել...</p>	<p>2 թույլ</p>

Ամփոփում

Կատարված հետազոտության արդյունքում, կարելի գալ հետևյալ եզրահանգման, որ ժամանակակից ուսուցչի խնդիրն է «սովորեցնել անհատական կրթական երթուղու օպտիմալ ընտրությունը և այն անցնելու ուղիները, այսինքն. «Նավարկություն կրթության մեջ» ... »: Կրթության մարդասիրությունը ենթադրում է արժեքային վերաբերմունք աշակերտի անհատական տարբեր դրսևորումների նկատմամբ: Գիտելիքը, մյուս կողմից, գործում է ոչ թե որպես նպատակ, այլ որպես անձի զարգացման միջոց: Դրա համար ամենահարուստ հնարավորությունները տալիս են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ դասարանում SՅՏ կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական և քննադատական մտածողության, երևակայության և անկախության զարգացմանը: Եզրափակելով, ես ուզում եմ անել հետևյալ եզրակացությունը. Ուսուցիչը ներկայումս կարիք ունի սովորել օգտագործել համակարգչային տեխնոլոգիան, ճիշտ այնպես, ինչպես նա այսօր օգտագործում է գրիչ կամ կավիճ դասի վրա աշխատելու համար: Կարողանա ստեղծել սեփական տեղեկատվական տեխնոլոգիաներ և հմտորեն կիրառել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ դասի մեթոդաբանությունը կատարելագործելու համար: Ուսուցչի համար համակարգիչն այլևս շքեղություն չէ ,այլ՝ գործիք: Մարդը, ով տիրապետում է տեխնոլոգիային և տեղեկատվությանը, ունի այլևս որոճ, կարող է այլ կերպ մոտենալ ծագած խնդրի գնահատմանը, դրանց կազմակերպմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում ժամանակակից դպրոցում պետք է դիտարկել որպես դասվանդման մեթոդներից մեկը: Այս մանկավարժական հետազոտությունը կշարունակվի իրականացվել փորձի արդեն նախանշված պլանի համաձայն:

Օգտագործված գրականություն

1. Վ. Մանտուլենկո «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
2. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
3. Ալբերտ Նալչաջյան, «Հոգեբանության հիմունքներ»
4. Электронные образовательные ресурсы нового поколения: в вопросах и ответах. – М.: Агентство «Социальный проект», 2007
5. Հակոբյան Լ. Ադամյան Ն. Ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում «Մանկավարժական միտք» 2016 3-4(62-63) էջ 211-214
6. «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կազմակերպումը դպրոցում» Ն. Մկրտչյան: